ես ծի խեծնեմ էրթամ էն ծովու պերան, էն պաներ առնեմ, կեամ կռիւ անեյնք։

Սանասար ծին խեծաւ, կնաց ծովի պերան, էն պաներ պերելու. մէրը տեսաւ էտ ասքարները, էլաց, մտաւ սարէն, տեսաւ Բաղտասարին մէնակ, ասաց կնոր մտկի մէջ, Սանասար փախէ. էկան մե տը մորթեն։

73. Բաղտասար ասաց.—Մարէ ընչի՞ կը լաս։

—Ես կը լամ, շատ ասքեար էկան, Սանասար թողէ փախէ։

Ասաց.—Մա՛րէ, չի՛ փախէ, տիւ մի՛ վախենա։

Բաղտասար էլաւ, մինչև իրիկուն կայնեց կռիւ։ Իրիկուն քնաւ, ախպէրն էկաւ, տիւռ ծեծեց, պաց արին, էկաւ քընաւ. խլբասուն խեծաւ քուռկու Զալալին, կապեց սատաֆէ գլին, առեց Թուրն ու Կեծակին, գուրզն ու Գօրօզին, կնաց կռիւ։ Մինչև իրիկուն ասքեարների կէսը սպանեց, խլբասուն Բաղտասարն առեց էտ զէնքեր, կնաց կռիւ։ Մինչև կէսօրին կռուեց, կռիւ վայտոստ[1] արին, Բաղտասար էկա տուն։

74. Մէկել օր, մարթ չէկաւ կռիւ։

Թակեաւոր ասաց Թարիւր[2] աղասուն.—Կնա կռիւ։

Թարիւր աղասին ասաց.—Փա՛թշահ, մեյնք չընք կէս՛նայ վըր կնոր. քիւ Թակեաւորութէն կը վճայնեն. աղէյն էն ա, չէրթանք կռիւ, մեր ասքեարն էլ չըսպանուեն։

Թակեաւոր մտածեց, տեսաւ որ չարա չը կայ, կռիւ կնոր վնաս ա, ասաց.—Կործ չիւնենք կնոնց խետ։

Գ.

75. Սանասարի քաչութիւն ընկաւ էտա պէօլէօր երկիր։ Խապար խասաւ Զինըմաչինայ Թակեաւորի ախչկան՝ քեռասուն ճող ծամին՝ Գէօհար խանըմին։ Էտ Թակեաւորն էտ ախչկին էր, մարթ չըկար կնոր։ Էտ Գէօհար խանըմին քեռասուն խատ փալիվան էր. էտ Գէօհար խանըմ մէկ Թուխտ կրեց խտու փալիվանին, ասաց.—Տար Աչմու Թակեաւորի քեռաղաք, տու Սանասարին։

76. Փալիվանը իպի տարաւ սարի մէջ, կայնեց Սանասարի, Բաղտասարի կըլխի վերէն, իրիշկաց, էրկուսն էլ քնած էն. չիմացաւ որն էր Սանասար, տրեց Բաղտասարի կըլխի պարցի տակ։ Էլան շօրերը խակեան, Բաղտասարը տեսաւ Թուխտըմ կայ պարցի տակ, առեց կարտաց։

---

1. Վերջացնել, կաղմալուծել։ 2. Հրամանատար. խմբապետ։